ՀՀ ԿԳՄՍՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

« » ________ 202 թ.

____

(ստորագրություն)

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի գրադարանը հանդիսանում է Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումներից մեկը:

1.2 Գրադարանը գործում է Քոլեջի կանոնադրության և սույն կանոնակարգի համաձայն:

1.3 Գրադարանի գրականությունը և գույքը հանդիսանում է Քոլեջի սեփականությունը:

1.4 Գրադարանից օգտվելու իրավունք ունեն միայն Քոլեջի աշխատակիցներն ու ուսանողները:

1.5 Գրադարանի պատասխանատուն գրադարանավարն է, ով նշանակվում և ազատվում է Քոլեջի տնօրենի հրամանով:

1.6 Գրադարանավարը պատասխանատու է գույքի և գրքային ֆոնդի պահպանման համար:

2. ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Գրադարանային ծառայությունների ընդարձակում:

2.2 Էլեկտրոնային գրադարանի ստեղծում:

3. ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1 Ընթերցողների գրանցում ընթերցողի քարտի միջոցով, որն իրավունք է տալիս ընթերցողին ուսումնառության տարիներին օգտվելու գրադարանից:

3.2 Գրադարանային ֆոնդերի խմբավորում, վնասված գրքերի փոխարինում նորացված գրքերով:

3.3 Գրական միջոցառումների կազմակերպում:

4. ԸՆԹԵՐՑՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

4.1 Ընթերցողը կրում է նյութական պատասխանատվություն գրադարանին պատճառած վնասի համար:

4.2 Գրադարանում գրանցվելու համար ուսանողը ներկայացնում է ուսանողական տոմս:

4.3 Գիրքը կորցնելու կամ վնասելու դեպքում ընթերցողը պարտավոր է վերադարձնել գիրքը:

4.4 Ընթերցողը գրադարանից կարող է օգտվել և ընթերցասրահում և տուն տանելու միջոցով:

4.5 Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ուսանողը պարտավոր է վերադարձնել իր մոտ եղած գրականությունը:

4.6 Եթե ընթերցողն ազատվում կամ հեռացվում է Քոլեջից, նա պարտավոր է վերադարձնել իր մոտ եղածը

4.7 Ուսումնական գրականությունը կարող է մնալ ընթերցողի մոտ մինչև ուսումնական տարվա ավարտը:

4.8 Բառարանները, տեղեկատվությունները, հանրագիտարանները և մեկ օրինակ գրքերը տրամադրվում են ընթերցողին միայն գրադարանում օգտվելու համար: